Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2014 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 93 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 23-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից:

Դիմումները՝ ըստ բնույթի	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբա-նում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներկրման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	5	5	5			
Ցորենի և առվույտի սերմացու հատկացնելու մասին	1	1		1		Դիմումատուին պարզաբանվել է, որ ՀՀ 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում՝ համաձայն մարզպետարանների կողմից ներկայացված պահանջարկի՝ մարզերին հատկացվել է համապատասխան քանակությամբ սերմացուներ: Ծրագրի շրջանակներում առվույտի սերմացու ստանալու համար դիմումատուն նախապես պետք է

						դիմեր համայնքի ղեկավարին:
Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու և տարաժամկետ վճարման պայմանով տրամադրված երինջների դիմաց վճարման ժամանակացույցում փոփոխություն կատարելու մասին	10	8	1	7		2 դիմում ընթացքի մեջ է: 5 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները վերցված են հաշվառման և հանրապետություն տոհմային երինջներ ներկրվելու, ինչպես նաև սեփական վերարտադրության հաշվին տոհմային տնտեսություններում աճեցված տոհմային կենդանիների վաճառք իրականացվելու դեպքում դիմումատուների խնդրանքը հնարավորության սահմաններում կբավարարվի: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 17.04.2014թ. <<Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ներկրված և տարաժամկետ վճարման պայմանով տրամադրված տոհմային երինջների դիմաց մի շարք տնտեսավարող սուբյեկտների պարտք մարելու մասին>> N 412–Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ դադարեցվել են միայն մինչև որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ պայմանագրերով նախատեսված վճարման ժամկետների կետանցի համար հաշվարկված տույժերով ձևա-

						վորված պարտավորությունները և առաջարկվել է դիմումատուներին միջոցներ ձեռնարկել պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:
Անտառային հողի վարձակալության, հողատարածքի, արոտավայրի սեփականաշնորհման և արոտավայրի օգտագործման թույլտվություն տալու մասին	6	6		6		3 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, 1 դիմում՝ ՀՀ Կոտայքի մարզպետարան: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ արոտավայր ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել այն համայնքի ղեկավարին, որի վարչական սահմաններում է գտնվում հիշյալ հողատարածքը, քանի որ ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ համայնքին և պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սահմանված կարգով տրամադրում ու հետ են վերցնում տեղական ինքնակառավարման մարմինները: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը և նոր պայմանագիր կնքելու թույլտվությունը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ լիազոր մարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքում:

						ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքերում:
Գյուղատնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	5	5	5			
Խնձորի բերքի և մեղրի իրացման գործում օժանդակելու մասին	3	3		3		
Պտղատու և դեկորատիվ ծառերի տնկիներ տրամադրելու մասին	7	7		7		7 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունը և իրացումն իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի տնօրինում:
Աշխատած ժամանակաշրջանի և աշխատավարձի չափի վերաբերյալ արխիվային փաստաթղթերի պատճեններ և տեղեկանքներ տրամադրելու մասին	3	3	1	2		1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում նրանց աշխատած տարիների վերաբերյալ արխիվային փաստաթղթեր առկա չեն: 1 դիմում վերահասցեագրվել է <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
Աշխատանքի ընդունելու և աշխատանքում վերականգնելու մասին	2	2		2		1 դիմումատուի պարզաբանվել է, որ «Բաժնետիրական ընկերու-

						թյունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընկերության աշխատակիցներին սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ընկերության տնօրենը: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և դիմումատուի միջև կնքվել է պայմանագիր, որը լուծարվել է ծրագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ:
Անասնաբույժ աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	4	4	4			
Գյուղատնտեսության ոլորտում տարբեր ծրագրային առաջարկներ իրականացնելու մասին	11	11		11		
Ցրտահարության հետևանքով կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	8	5	1	4		3 դիմում ընթացքի մեջ է: 4 դիմումատուի պարզաբանվել է, որ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատումը իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշմամբ հաստատված կարգի:

						Համաձայն կարգի 9-րդ կետի՝ պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծվում են հանրապետական, մարզային և համայնքային հանձնաժողովներ, որոնք ելնելով հանձնաժողովների աստիճանակարգությունից, իրականացնում են պատճառված վնասների գնահատման գործընթացում իրենց վերապահված լիազորությունները: Համաձայն ՀՀ կառավարության 10.04.2014 թվականի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 363-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N 532-Ն որոշման՝ ՀՀ մարզերում բնական աղետներից առավել տուժած համայնքներին, որպես պետական անհատույց աջակցություն, հատկացվել են ֆինանսական միջոցներ՝ հողի և ջրի վարձավճարների փոխհատուցման նպատակով:
Անորակ ցորենի սերմացուի պատճառով կրած վնասը փոխհատուցելու մասին	4	4		4		4 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի թիվ 971-Ն որոշմամբ հաստատվել է <<ՀՀ 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը>>, որի գործընթացը սկսելուց առաջ ՀՀ

						գյուղատնտեսության նախարարության, <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի և ԳԱՄԿ-երի աշխատակիցները, ՀՀ բոլոր մարզպետարաններում շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպել են քննարկումներ և ներկայացրել ծրագիրը, որից հետո ծրագրի չափորոշիչների և պահանջների համաձայն, պայմանագրային հիմունքներով սերմացու ստանալ ցանկացող հողօգտագործողների կողմից նախնական ցանկ-հայտերը համայքներում ամփոփվել են, ներկայացվել մարզպետարաններ, որոնց կողմից էլ ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի աշխատակիցները, յուրաքանչյուր տարի հողօգտագործողի մասնակցությամբ, ուսումնասիրելով յուրաքանչյուր հողօգտագործողի փաստաթղթերը, ծանոթացրել են նրանց ծրագրի պահանջներին և պայմանագրի դրույթներին, որից հետո կնքվել են պայմանագրեր և հատկացվել են սերմեր: 2010-2014 թվականներին ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի շահառուներին հատկացնելու համար հանրապետություն են

						ներկրվել աշնանացան ցորենի կայուն բարձր բերքատու (մինչև 100 g/հա պոտենցիալով) սորտեր, այլ ոչ հիբրիդներ: Ներկրված սորտերն ունեցել են արտահանող երկրի կողմից տրված բոլոր անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերը, իսկ ներկրման ժամանակ <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն մուտք գործած բոլոր սերմերի խմբաքանակներից վերցվել են փորձանմուշներ, կատարվել անհրաժեշտ փորձաքննություններ: Բոլոր խմբաքանակներից վերցված նմուշները համապատասխանել են պետական չափորոշիչի (ԳՈՍ 10467-76) պահանջներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ շահառուների կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելը պայմանավորված է եղել բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությունում ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչների հետ ծրագրի քննարկման արդյունքներով, որոշվել է շահառուների պարտավորությունները թեթևացնելու և պետությանը

						վնաս չպատճառելու նպատակով, շահառուների ստացած յուրաքանչյուր կիլոգրամ աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմի դիմաց 700 դրամի փոխարեն գանձել 420 դրամ: <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարած շահառուներին համապատասխան գրություններ են ուղարկվել՝ առաջարկելով կնքել համաձայնագիր և վճարման ժամանակացույց՝ վճարումները նախատեսելով 2013 թվականի հունիսից մինչև հոկտեմբեր ամիսը ներառյալ՝ յուրաքանչյուր ամսվա համար 20%-ի չափով: Առաջարկված պայմանները չընդունած շահառուների վերաբերյալ դատարան են ներկայացվել գումարային հայցապահանջներ:
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախա-

						տեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացված գումարների միջոցով տրամադրվել է օժանդակություն, 2008 թվականից ի վեր ՀՀ կառավարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով ֆինանսական միջոցներ չի հատկացվել:
Վարկ և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին	3	3		3		
Գյուղատնտեսական տեխնիկա տրամադրելու, գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	3	3		3		1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 20.07.2013 թ.N 650-Ն որոշման հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի իրացումն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի և ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ-ի միջոցով: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման գործա-

						ռույթը ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասության սահմաններից դուրս է:
Տարաբնույթ հարցեր (սահմանափակ քանակությամբ օգտագործված անվադողերի ներկրման թույլտվություն տալու, պատվավոր քաղաքացու կոչում տալու հարցում միջնորդելու, ջրագծի անցկացման, տարածքի սեփականաշորհման, սերմացու տրամադրելու, սերմացու տրամադրելու պանրի մայա ՀՀ ներկրելու, ՀՀ Շիրակի մարզում սպանդանոց կառուցելու, սխալ վճարում կատարելու, Թուրքիայից բանջարեղենի ներկրումն արգելելու, կայծակի հետևանքով անկած կենդանիների դիմաց վնասը փոխհատուցելու մասին և այլն)	16	13	1	12		3 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում վերահասցագրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն, 1 դիմում՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան:
ԸՆԴԱՄԵՆԸ	**93**	**85**	**18**	**67**	**0**	**8 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2014 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 59 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբա-նում	Մերժվել է	Ծանոթություն
Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
Գյուղատնտեսական բացօթյա շուկայի տարածքում վաճառասեղան հատկաց-նելու մասին	5	5	5			
Աշխատանքով ապահովելու մասին	1	1		1		
Պարարտանյութի օգտագործման տեխնո-լոգիայի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տալու մասին	1	1	1			
Սերմացու տրամադրելու մասին	6	6		6		
Կարկտահարության հետևանքով պատ-ճառված վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	8	8		8		
Ցեց վնասատուի դեմ պայքարի միջո-ցառումների վերաբերյալ մասնա-գիտական խորհրդատվություն տրա-մադրելու մասին	1	1	1			
Ապօրինի ծառահատումների վերաբերյալ	2	2	2			
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	1	1		1		
Գյուղատնտեսական կենդանիների խնամքի, կերակրման, պահվածի վերա-բերյալ մասնագիտական խորհրդատ-	5	5	5			

վություն տրամադրելու մասին						
Գյուղատնտեսական տեխնիկա տրամադրելու մասին	22	22		22		
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման մասին	2	2		2		
Մեղվաբուծության զագացման մասին	2	2		2		
Գյուղատնտեսական մթերքների արտահանման համար աջակցություն ցուցաբերելու մասին	2	2		2		
ԸՆԴԱՄԵՆԸ	**59**	**59**	**14**	**45**		